ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 22 >> օգոստոսի 2016թ. N 75 - Ա

ք. Արմավիր

ՍԱՐԳԻՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի երրորդ մասով և հիմք ընդունելով <<Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Սարգիս Խաչատրյանի 2016 թվականի օգոստոսի 19-ի դիմումը.

կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝

1. <<Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Սարգիս Խաչատրյանին տրամադրել չվճարվող արձակուրդ 2016 թվականի օգոստոսի 22-ից օգոստոսի 26-ը ներառյալ՝ 5 օր տևողությամբ:
2. Սարգիս Խաչատրյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում <<Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել <<Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի բուժական գծով տեղակալ Անահիտ Հայրապետյանին:
3. Սարգիս Խաչատրյանին աշխատանքի մեջ համարել 2016 թվականի օգոստոսի 29-ից:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ. ՄՈՒՐԱԴՅԱՆ